

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
վիճակագրության պետական խորհրդի նիստի

21.07.2011թ.

ժ.14: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Աղազարյան, Ս.Գավթյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Ջ. Սիրգոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Գ. Հովսեփյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Ա.Գաշյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` երեք հարց.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա.Հայրապետյան/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում` Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի հունիսի 27-ից հուլիսի 1-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Կոմունիկացիաները վիճակագրությունում» և «Մարդահամարի տվյալների տարածում և համագործակցություն» խորագրով աշխատանքային հանդիպումներին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Գ.Գևորգյան/

2.2. Հաղորդում` Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի հուլիսի 11-ից հուլիսի 13-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Էկոլոգիական քաղաքականության կոմիտեի ու Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի կողմից համատեղ կազմակերպած Էկոլոգիական ցուցանիշների ներդրմանն ու օգտագործմանը նվիրված Եվրոմիության, Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի երկրների բնապահպանների և վիճակագիրների միասնական նպատակային խմբի խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Յու.Պողոսյան/

3. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները-կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ տողի «531815.6» թիվը փոխարինել «532007.6» թվով, 4-րդ տողի «73331.9» թիվը փոխարինել «75853.3» թվով, իսկ ընդամենը տողի «690146.6», թիվը` «692860.0» թվով:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում` Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի հունիսի 27-ից հուլիսի 1-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Կոմունիկացիաները վիճակագրությունում» և

«Մարդասահմարի տվյալների տարածում և համագործակցություն» խորագրով աշխատանքային հանդիպումներին մասնակցելու վերաբերյալ:

/Չեկուցող՝ Գ. Գևորգյան/

2.2. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի հուլիսի 11-ից հուլիսի 13-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Էկոլոգիական քաղաքականության կոմիտեի ու Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի կողմից համատեղ կազմակերպած Էկոլոգիական ցուցանիշների ներդրմանն ու օգտագործմանը նվիրված Եվրոմիության, Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի երկրների բնապահպանների և վիճակագիրների միասնական նպատակային խմբի խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Չեկուցող՝ Յու. Պողոսյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ